Հայոց լեզվի և գրականության ուսուցչի առարկայի քննության ծրագիր

Առարկայի քննության ժամանակ ստուգվում է՝

- Ազգային ուսմանական պլանի հիմնական պահանջների իմացությունը,
- առարկայի ուսուցման համար պարտադիր լեզվաբանական և գրական նյութի իմացությունը,
- ուսումնական գործընթացն ապահովելու համար գնահատման տարբեր մեթոդների կիրառումը,
- անծանոթ տեքստն ըմբռնելու և վերլուծելու ունակությունը,
- քննադատական մտածողության ունակությունը,
- գրելու կուլտուրան։

Ա. Հայոց լեզու

I. Ներածություն

1. Հայոց լեզուն որպես հայ ազգի ընդհանուր ազգային լեզու և Վրաստանի ազգային փոքրամասնության՝ հայերի մայրենի լեզու։ Հայոց լեզվի տեղը համաշխարհային լեզուների շարքում։ Հայոց լեզվի դերը և նշանակությունը հայ ժողովրդի ազգային և պետական ձևավորման գործընթացում։
2. Գրական հայերենի սկզբնավորումը և զարգացման հիմնական փուլերը։ Հայ գրերի ստեղծման և դպրության զարգացման հիմնական փուլերը։ Գրական հայերենը զարգացման տարբեր ժամանակաշրջանների բաժանելու հիմնախնդիրը։ Խաչատուր Աբովյանի դերը նոր գրական հայերենի (աշխարհաբարի) հիմնադրման գործում։
3. Ժամանակակից գրական հայերենը որպես բազմագործառնության գրական լեզու՝ լիարժեք հաղորդակցման, գրականության և գիտության լեզու։
4. Գրական հայերենը և ազգային լեզուն։ Հայոց լեզվի բարբառները որպես գրական հայերենի հարստացման աղբյուր և լեզվական տարատեսակությունների հիմնական պատճառ։ Գրական լեզվի ընդհանուր կանոնների սահմանման սկզբունքները։ Կանոնավորիչ աշխատանքի այսօրվա վիճակը։

II. Հնչյունաբանություն-հնչույթաբանություն

5. Ժամանակակից գրական հայերենի հնչյունական կառուցվածքը։ Հնչյուն և տառ։ Այբուբեն։ Ձայնավորներ և բաղաձայններ։ Ձայնավորների ու բաղաձայնների դասակարգումը։ Երկբարբառներ։
6. Վանկ, վանկի տեսակները։ Վանկատման և տողադարձի կանոնները։
7. Հնչյունափոխություն՝ ձայնավորների, երկհնչյունների հնչյունափոխությունը։
8. Բառային և տրամաբանական շեշտ։
9. Ձայնավորների, բաղաձայնների և երկհնչյունների արտասանությունը և ուղղագրությունը։
10. Մեծատառերի ուղղագրությունը։

III. Ձևաբանություն

11. Բառ։ Բառի ձևաբանական առանձնահատկությունը՝ թեքվող և չթեքվող բառեր։ Անկախ և օժանդակ բառեր։ Բառի ձևաբանական կազմությունը՝ հիմք, արմատ, ածանց։ Ածանցների դասակարգումը։
12. Խոսքի մասեր։ Խոսքի մասերի դասակարգումը։
13. Գոյական անուն։ Գոյականի կազմությունը։ Գոյականի տեսակներն ըստ իմաստի։ Գոյականի թիվը՝ եզակի և հոգնակի։ Գոյականի որոշյալ և անորոշ առումները։ Գոյականի հոլովումը։ Հոլովները և դրանց նշանները։ Հոլովման տեսակները (արտաքին և ներքին հոլովում); Այլաձև հոլովում։ Հոլովների գործածությունը մի քանի առումներով։
14. Ածական անուն։ Ածականի կազմությունը։ Ածականակերտ ածանցներ։ Ածականի տեսակներն ըստ իմաստի։ Ածականի համեմատության աստիճանները։ Ածականի կիրառությունները։ Ածականների գործածությունը գոյականի հետ։ Ածականների փոխանվանական կիրառությունը։ Ածականների հոլովումը։
15. Թվական անուն։ Թվականի կազմությունն ու տեսակները։ Թվականակերտ ածանցներ։ Թվականի ուղղագրությունը։ Թվականների գործածությունը գոյականի հետ։ Քանակական թվականների փոխանվանական կիրառությունը։ Թվականների հոլովումը։

16. Դերանուն: Դերանվան կազմությունն ու տեսակները՝ անձնական, ցուցական, փոխադարձ, հարցական, ժխտական, որոշյալ, անորոշ և հարաբերական: Դերանունների հոլովումը: Դերանվանական հոդեր:
17. Բայ: Բայի կազմությունը՝ պարզ, ածանցավոր և բարդ: Բայական ածանցները՝ սոսկածանցներ, բազմապատկական ածանցներ, պատճառական ածանցներ: Բայի քերականական կարգերը՝ դեմք, թիվ, եղանակ, ժամանակ, սեռ: Անդեմ և դիմավոր բայեր: Դերբայ: Դերբայների տեսակները: Բայի խոնարհումը: Կանոնավոր բայերի խոնարհումը: Հարադիր և զուգադրական բայերի խոնարհումը: Անկանոն և պակասավոր՝ դիմազուրկ բայերն ու դրանց խոնարհումը:
18. Մակբայ, մակբայի կազմությունը: Մակբայներն ըստ իմաստի: Մակբայի կիրառությունը:
19. Հոդ: Ստացական, դիմորոշ, ցուցական և որոշիչ հոդ:
20. Կապ: Նախադրություն և ետադրություն: Կապի կազմությունը: Կապական բառեր: Կապի տեսակներն ըստ իմաստի: Կապի կիրառությունը: Կապի հոլովումը:
21. Շաղկապ: Համադասական և ստորադասական շաղկապներ: Շաղկապի կազմությունը: Շաղկապական բառեր: Շաղկապի կիրառությունը:
22. Վերաբերական, վերաբերականի տեսակները: Վերաբերականների կազմությունը և ուղղագրությունը: Վերաբերականի տրոհումը: Վերաբերականների կետադրությունը:
23. Ձայնարկություն: Ձայնարկության տեսակներն ու իմաստային առումները: Ձայնարկության կազմությունը:

IV. Շարահյուսություն

24. Նախադասությունը որպես շարահյուսական միավոր:
25. Նախադասության անդամների փոխհարաբերությունը՝ համադասական և ստորադասական կապակցություն:
26. Նախադասության անդամների կապակցման եղանակները՝ համաձայնություն, խնդրառություն, առդրություն:
27. Նախադասության գլխավոր անդամները՝ ենթակա և ստորոգյալ: Ենթակայի արտահայտման միջոցները: Ստորոգյալի տեսակներն ու արտահայտման միջոցները: Ենթակայի և ստորոգյալի շարադասությունը: Ենթակայի և ստորոգյալի համաձայնությունն ու շարադասությունը:
28. Նախադասության երկրորդական անդամներ՝ լրացումներ: Գոյականական անդամի լրացումներ՝ որոշիչ, հատկացուցիչ, բացահայտիչ: Բայական անդամի լրացումներ՝ խնդիրներ, պարագաներ:
29. Նախադասության բազմակի անդամները:
30. Նախադասոության տեսակներն ըստ իմաստի՝ պատմողական, հարցական, հրամայական և բացականչական:
31. Նախադասության տեսակներն ըստ կազմության՝ պարզ, բարդ, միակազմ և երկկազմ: Պարզ նախադասության տեսակները՝ համառոտ և ընդարձակ: Բարդ համադասական և բարդ ստորադասական նախադասություններ: Համադասասական նախադասությունների կապակցումը: Գերադաս և ստորադաս նախադասությունների կապակցումը:
32. Ստորադասական նախադասությունների տեսակները: Գլխավոր և երկրորդական նախադասությունների համաձայնությունը:
33. Բարդ ստորադասական նախադասության վերածումը պարզի:
34. Նախադասության այլ բաղադրիչները՝ օժանդակ բառեր և միջանկյալ անդամներ, կոչական:
35. Նախադասության անդամների և օժանդակ բառերի զեղչումը:
36. Մեջբերվող խոսք՝ ուղղակի և անուղղակի խոսք:
37. Ներգործական և կրավորական կառուցվածքով նախադասություններ:
38. Կետադրություն՝ անջատման նշաններ, տրոհման նշաններ:

V. Բառագիտություն

39. Բառագիտության առարկան: Բառապաշար: Լեզվի բառային կազմությունը: Հայոց լեզուն և փոխառյալ բառերը: Բառային բացառություններն ըստ ծագման: Բառային բացառություններն ըստ գործածության: Բառապաշարի ոճական շերտերը:

40. Բառ՝ բառի ուղիղ և թեքված ձևերը: Մենիմաստ և բազմիմաստ բառեր: Ուղիղ և փոխաբերական իմաստ:
41. Դարձվածքներ:
42. Բառերի փոխհարաբերություններն ըստ իմաստի և ձևի՝ հոմանիշներ, հականիշներ, համանուններ, հնաբանություններ և նորաբանություններ: Բառային տարատեսակություններ:
43. Բառակազմության միջոցները: Բառերի տեսակներն ըստ կազմության՝ պարզ, բաղադրյալ և բարդ բառեր:
44. Բառակազմություն: Բառի բաղարդիչները: Բառերի տեսակներն ըստ կազմության: Բառակազմական հնչյունափոխություն: Համառոտագրություն: Բառակազմական վերլուծություն:
45. Բարդություններ: Բարդությունների տեսակները: Բարդությունների ուղղագրությունը:

VI. Ոճ և ոճաբանություն
46. Հնչյունների ոճական արժեքը, բառերի ոճական արժեքը: Դարձվածային, բանաստեղծական բառեր: Շարահյուսական կառույցի ոճական արժեքը: Գործնական ոճ: Գիտական, վարչական, հրապարակախոսական, գեղարվեստական, առօրյա-խոսակցական ոճ:
47. Ոճական թերություններ՝ նույնաբանություն, բառապատճեն:

բ) Հայ գրականություն

I. **Գրական տեքստը վերլուծելու համար պարտադիր գրականագիտական տերմինները.** ակնարկ, այլաբանություն (ալեգորիա), այլաբերություն, անձնավորում (պրոզոպոպեա), առակ, առասպել (միֆ), առձայնույթ (ասոնանս), ասացվածք, ասք (ավանդավեպ), արձակ, աֆորիզմ, բալլադ, բաղաձայնույթ (ալիտերացիա), բանաստեղծական տուն, բանաստեղծություն, բնաբան, բնանկար, բնույթ, գաղափար, գեղարվեստական լեզու, գեղարվեստական կերպար, գեղարվեստական պատում, գործող անձ, գրոտեսկ, դիմանկար, երգիծանք, երկխոսություն, էլեգիա (եղերերգ), էպոս, էսսե (խոհագրություն), թատերգություն, թեմա, ժանր, խորհրդանիշ, կատակերգություն, կենսագրություն, կերպար, կոլիզիա, կոմպոզիցիա (ներառյալ կառուցվածքային տարրերը), հակաբանություն, հակադրություն, համեմատություն, համընկնում, հանգ, հեգնանք, հերոս, հեքիաթ, հիպերբոլ, հնչերանգ, հումոր, հուշագրություն, մակդիր, մենախոսություն, մեջբերում (քաղվածք), մոտիվ, նախաբան, նշագրում (ռեմարկ), նովել, նորավեպ, շրջասություն, ողբերգություն, չափազանցություն, չափածո տող, պատմվածք, պարադոքս, պիես, պոեզիա, պոեմ, ռիթմ, սյուժե, վեպ, վերջաբան, փոխաբերություն, փոխանունություն, քնարերգություն, օրհներգություն, ֆաբուլա:

II. Հայ գրականության զարգացման հիմնական փուլերը՝ վաղմիջնադարյան հայ գրականության «Ոսկե դար», հայ գրականության Վերածննդի դարաշրջան, հայկական կլասիցիզմ, հայ նոր գրականություն, սենտիմենտալիզմ, ռոմանտիզմ, ռեալիզմ, մոդեռնիզմ, պոստմոդեռնիզմ:

III. **Առաջարկվող հեղինակները և նրանց ստեղծագործությունների ցանկը՝**
1. **Հին և միջնադարյան հայ գրականություն՝** Կորյուն՝ «Վարք Մաշտոցի», Փավստոս Բուզանդ՝ «Հայոց պատմություն», Մովսես Խորենացի՝ «Հայոց պատմություն», հայ ժողովրդական էպոս՝ «Սասնա ծռեր», Գրիգոր Նարեկացի՝ «Մատեան ողբերգության», Ներսես Շնորհալի՝ «Ողբ Եդեսիոյ», Մխիթար Գոշ, Վարդան Այգեկցի, Ֆրիկ, Նահապետ Քուչակ, Սայաթ-Նովա:
2. **Հայ նոր գրականություն՝** Խաչատուր Աբովյան, Հարություն Ալամդարյան, Միքայել Նալբանդյան, Մկրտիչ Պեշիկթաշլյան, Ստեփանոս Նազարյան, Ռաֆայել Պատկանյան, Պետրոս Դուրյան, Հակոբ Պարոնյան, Գաբրիել Սունդուկյան, Րաֆֆի, Մուրացան, Գրիգոր Զոհրապ, Նար-Դոս, Շիրվանզադե, Հովհաննես Թումանյան, Ավետիք Իսահակյան, Սիամանթո (Ատոմ Յարճանյան), Պերճ Պռոշյան, Ղազարոս Աղայան, Դանիել Վարուժան, Միսաք Մեծարենց, Լևոն Շանթ, Վահան Տերյան:
3. **Նորագույն շրջանի հայ գրականություն՝** Եղիշե Չարենց, Դերենիկ Դեմիրճյան, Ակսել Բակունց, Վահան Թոթովենց, Գուրգեն Մահարի, Ստեփան Զորյան, Հովհաննես Շիրազ, Կոստան

Զարյան, Մկրտիչ Արմեն, Վախթանգ Անանյան, Սերո Խանզադյան, Նաիրի Զարյան, Պարույր Սևակ, Համո Սահյան, Հրանտ Մաթևոսյան, Գևորգ Էմին, Վահագն Դավթյան, Սիլվա Կապուտիկյան, Աղասի Այվազյան, Հրաչյա Հովհաննիսյան, Մարո Մարգարյան, Անդրանիկ Ծառուկյան, Հակոբ Կարապենց, Վարդգես Պետրոսյան, Մուշեղ Գալշոյան, Պերճ Զեյթունցյան, Լևոն Խեչոյան, Վիլյամ Սարոյան, Շառլ Ազնավուր:

Ուսուցիչը պետք է կարողանա հասկանալ քննությունների ծրագրով նախատեսված տեքստերը, որը ենթադրում է գեղարվեստական ստեղծագործություններում ներկայացված կերպարների, թեմաների ու գաղափարների, մոտիվների, առանձին երկխոսությունների, իրավիճակների, կոլիզիայի, ենթատեքստի էության և հերոսների վարքագծի դրդապատճառների համապատասխան ըմբռնում: Բացի այդ, ուսուցիչը պետք է կարողանա հասկանալ բանաստեղծությունների իմաստային և զգացմունքային բովանդակությունը, ըմբռնել այլաբերությունը, էսսեյական կամ գրականագիտական բնագրերը: Դրա համար անհրաժեշտ է հեղինակային փաստարկումները քննադատաբար վերլուծելու և գնահատելու ունակություն: Ուսուցիչը պետք է կարողանա հասնել տրամաբանական դատողության և քննարկվող հարցի վերաբերյալ արտահայտել սեփական դիրքորոշումը:
Ուսուցչից պահանջվում է իմանալ գրական բնագրերում պատկերված այս կամ այն դարաշրջանին յուրահատուկ գաղափարները կամ հիմնախնդիրները: Ուսուցիչը նաև պետք է ունենա մի կողմից՝ գրական գործընթացի վրա դարաշրջանի առանձնահատկությունների ազդեցությունը, իսկ մյուս կողմից՝ հասարակական գիտակցության վրա գեղարվեստական ստեղծագործության ազդեցությունը ընկալելու ունակություն:
Ուսուցիչը պետք է կարողանա վերլուծել միևնույն դարաշրջանի տեքստերում նկարագրված հիմնախնդիրների ընդհանրություններն ու տարբերությունները (համեմատել միևնույն թեմաները, գաղափարները, հիմնախնդիրները և դրանց լուսաբանումները տարբեր դարաշրջանների տեքստերում):
Ուսուցիչը պետք է կարողանա վերլուծել նման կամ միևնույն հիմնախնդիրը տարբեր երկրների կամ մշակույթների ներկայացուցիչների ստեղծագործություններում:
Նման պահանջները հաղթահարելու համար ուսուցչի մոտ պետք է զարգացած լինի ստեղծագործական ինքնուրույն մտածողությունը, ստեղծագործության մասին քննադատական, տրամաբանական և փաստարկված դատողություններ անելու, գրական բնագրի հատվածների կամ գեղարվեստական տարբեր երկերի միջև եղած կապ սահմանելու ունակությունը: